Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում և նոր ուսումնական տարվա բացման առիթով շնորհավորում ենք բոլոր աշակերտներին և ուսանողությանը, նրանց ծնողներին, մանկավարժներին և կրթության շնորհակալ գործի բոլոր նվիրյալներին:

Աղոթում ենք առ Տերը, որ իմացության սերը միշտ զորավոր լինի Մեր զավակների հոգում և գիտելիքների ամբարումով ու նաև արժեքների ճանաչմամբ առաջնորդի դեպի հոգևոր հարստացում: Թող նոր ուսումնական տարին բազմարդյուն լինի և՛ սովորողների, և՛ ուսուցանելու կոչված շնորհընկալների՝ դասավանդողների համար՝ հանուն իր նոր կյանքը կերտող մեր ժողովրդի, մեր Հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու:

Թող Լույսն Իմանալի լուսավորի ձեզ, և Աստվածային շնորհները լինեն ձեզ վրա այսօր և միշտ. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
1 սեպտեմբերի 2002 թ.